

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Լենինգրադյան
փողոց Հ.29/12 հասցեում նախատեսվող հասարակական համալիրի
կառուցման

Պատվիրատու՝

«Լույսեր» ՓԲԸ

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ տնօրենի պաշտոնատեղի վրա



Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1	Հապավումներ	3
1.2	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.3	Նախատեսվող գործունեության բնութագիրը	7
1.3.1	Նախատեսվող գործունեության նկարագիր.....	7
	Էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ	8
1.3.2	Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը	10
1.4.3	Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....	17
1.4.4	Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ	17
1.4.5	Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ.....	18
1.4.6	Կադրային ապահովում և շինտեխնիկա	20
1.4.7	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	22
2.	ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	24
2.1	ՖԻԶԻԿԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	24
2.2	ՇՐՋԱՆԻ ՄԵՅՍՄԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	26
2.2	ԿԼԻՄԱՆ.....	27
2.3	Օդային ավազան	30
2.4	Ջրային ռեսուրսներ	34
2.5	Հողերի նկարագիրը	34
2.6	Հողային ռեսուրսներ.....	35
2.7	Կենսաբազմազանություն	36
2.8	Թափոնների կառավարում	37
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	39
3.1	ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	39
3.2	ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....	40
3.3	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	40
3.3.1	ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....	40
3.3.2	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	40
3.3.3	ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	41
3.3.4	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	42
3.3.5	ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	44
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	46
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	49
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	46
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	47

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող՝	«Լույսեր» ՓԲԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	Լենինգրադյան փողոց 31փ/25
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Լենինգրադյան փողոց 31փ/25
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

1.1 Հապավումներ

ՀՀ՝	Հայաստանի Հանրապետություն
ՓԲԸ՝	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՍՊԸ՝	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՊՈԱԿ՝	պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Հասարակական համալիրի նախագիծը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, , Լենինգրադյան փողոց Հ. 29/12 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից հասարակական համալիրի:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Հասարակական շենքի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ.),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ.),
8. <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ.),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ

(կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեւերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

16. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքը,

17. ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781,

18. ՀՀ կառավարության 2010 թվականի N71-Ն որոշում,

19. ՀՀ կառավարության 2010 թվականի N72-Ն որոշում

20. ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշում:

21. ՀՀ կառավարության 14.08.2008 թվականի N 967-Ն

22. Կառավարության 2015թ. մարտի 03-ի N596-Ն որոշում:

23. Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N1243-Ն հրաման:

24. 2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենք

25. ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկում-ների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշումը:

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Սույն փաթեթում ներկայացված է Լենինգրադյան 29/12 հասցեում գտնվող հողատարածքի կառուցապատման հայեցակարգային նախագիծը: Դիտարկվող տարածքը գտնվում է քաղաքի նոր ձևավորվող՝ Նոյ թաղամասում: Նախնական տվյալներով թաղամասում նախատեսվում է կառուցել 20ից ավել բարձրահարկ բնակելի շենքեր: Ուստի տվյալ հողատարածքում նպատակահարմար է նախատեսել հասարակական կենտրոն, որը կծառայի տարբեր նպատակների: Տարածքը գտնվում է թաղամաս մտնող 2 գլխավոր փողոցների անկյունում, հեռու սննդի և առևտրի կետերից: Առաջարկվում է կառուցել հասարակական կենտրոն, որը իր մեջ կներառի սուպերմարկետ, ֆուդքորթ, մարզասրահ և օֆիսային տարածքներ: Ներկայացված շենքը զբաղեցնում է հողամասի 80%-ը՝ 1757.7քմ, որը ունի 3 ստորգետնյա ավտոկայանատեղի և 12 վերգետնյա հարկեր: Սույն հայեցակարգային նախագիծում նախատեսված է 3 հարկ ստորգետնյա ավտոկայան, գրասենյակային հարկերի և սուպերմարկետի հաճախորդների համար: Հարկերը նախատեսվում է առանձնացնել իրարից արգելափակոցով: Առաջին հարկում է գտնվում սուպերմարկետը իր պահեստային տարածքներով: Երկրորդ հարկում ֆուդքորթը, 1, 2 հարկերը իրար են կապվում շարժասանդուղքներով և վերելակով, որը կապվում է նաև ավտոկայանատեղիների առաջին հարկի հետ, հաճախորդների մուտքը կազմակերպված է գլխավոր ճակատներից իսկ պահեստային հատվածը ետնամասով: Երրորդ հարկում գտնվում է մարզասրահը, որը կներառի մինիֆուտբոլի դաշտ, սքուաշի, յոգայի և մարզական սարքավորումների սրահներ, իրենց հարդերձարաններով: Երկրորդից չորրորդ հարկերի վիտրաժները արտաքինից պատված են մետաղական ցանցով, որի շնորհիվ այդ երկու հարկերը ընկալվում են որպես մեկ ծավալ Մնացած ութ հարկերը նախատեսված են որպես գրասենյակային տարածքներ: 4-րդ հարկից սկսված նահանջ հարկի սկզբունքով կառույցը բարձրանում է ապակեպատ և նեղանում է, թե շենքի արտաքին ծավալը կրճատելու, և թե գրասենյակային տարածքներում բնական լուսավորությունը ապահովելու նպատակով: Այս հատվածը ունի նաև մուտք ետնամասում:

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԵՆ

Հողամասի ընդհանուր մակերեսը – 2197.15 քմ

Կառուցապատման մակերեսը – 1757.7-80 քմ-80%

Բարեկարգում – 263.7 քմ-12%

Կանաչապատում -175.75- 8%

Ստորգետնյա -1,-2,-3 հարկերով ավտոկայանատեղի – 4500քմ;

Ավտոկայանատեղերի քանակ – 106 հատ:

- Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Նախատեսվող հասարակական համալիրի ավտոկայանատեղիներում նախատեսված է մեխանիկական արտածման-ներածման օդափոխություն: Համակարգը դրսում +5 °C -ից ցածր ջերմաստիճանի դեպքում նպահատակահարմար է գործարկել միայն CO գազի անթույլատրելի կոնցենտրացիայի դեպքում: Թարմ օդ վերցնելու համար նախատեսված է օդառի հորան համալիրի բակային հատվածում: Ա1 և Ա2 համակարգերի տանիքային օդամղիչները տեղակայված են տանիքում: Օդատարները նախատեսված են ցինկապատ թիթեղից, հորիզոնական օդահավաքներին միանալու մասում տեղադրվում են հրակասեցնող կափույրներ: Տանիքից դուրս եկող բոլոր օդատարները ջերմամեկուսացվում են: Տանիքում տեղադրվում են դեֆլեկտորներ:

ԽՄԵԼՈՒ-ՏՆՏԵՍԱԿԱՆ և ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՋՐՄՈՒՂ

Համակարգը նախատեսված է համալիրի խմելու-տնտեսական և հակահրդեհային կարիքների համար: Շենքի ջրամատակարարումն իրականացվում է քաղաքային ջրատարից: Մուտքագծերի անցքերը պատվում է ջրազազաանթափանց էլաստիկ նյութով:

Շենքի ջրամիացումը սան. սարքավորումներին իրականացվում է մասնաշենքի պոմպակայանից :

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ

Համալիրի էներգախնայողությունը և էներգաարդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ իրականացվելու են հետևյալ միջոցառումները.

- շենքի արտաքին երեսապատումը իրականացվելու է օդափոխվող երեսապատման համակարգի միջոցով, օգտագործելով ժամանակակից և արդյունավետ ջերմամեկուսիչներ
- տեղադրվելու են բարձր էներգաարդյունավետությամբ ջերմային պատուհաններ և վիտրաժներ

- կատարվելու է տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում
- ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտահանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են 60% ջերմության խնայողություն:

1.3.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Ինժեներա-երկրաբանական հետազոտությունների կատարող «ԳԵՈՌԵՍԵՐԶ» ՍՊԸ. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան 29/12 հասցեով հասարակական նշանակության շենքի տեղամասի ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ: Նշված աշխատանքների իրականացման համար հիմք են ծառայել պատվիրատուի հետ կնքված թիվ 22-08 պայմանագիրը և աշխատանքների կատարման տեխնիկական առաջադրանքը (ված 2): Ինժեներա-երկրաբանական հետազոտությունների իրականացման Արտոնագիր (լիցենզիա) 17340 տրված 05.11.2019:

Ինժեներա-երկրաբանական հետազոտություններն իրականացվել են համաձայն տեխնիկական առաջադրանքի: Հետազոտական աշխատանքների ընթացքում, առաջադրված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝ տարածքի ինժեներա-երկրաբանական տեղագնում, հորատանցքերի հորատում, գրունտներից խախտված և չխախտված կառուցվածքի նմուշների ընտրում, գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների որոշում լաբորատոր պայմաններում, նախկինում տարբեր գիտա-արտադրական և նախագծա-հետազոտական կազմակերպությունների կողմից, տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետու նյութերի հավաքում, ամփոփում և ընդհանրացում:

Նախագծման փուլը՝ նախագծային և աշխատանքային փաստաթղթավորում. Բարդության աստիճանը ըստ ինժեներա-երկրաբանական պայմանների - II (միջին): Ինժեներա-երկրաբանական տեղագնումն իրականացվել է տեղանքի ռելեֆի առանձնահատկությունների տեսողական գնահատման, երկրաբանական և ինժեներա-երկրաբանական վտանգավոր պրոցեսների և երևույթների բացահայտման նպատակով:

Դաշտային աշխատանքներն իրականացվել են գլխ. երկրաբան Ն. Մ. Ալեքսանյանի ղեկավարության ներքո, «ԳԵՈՌԵՍԵՐԶ» ՍՊԸ հորատող խմբի կողմից, 2019 թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում: Աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր առմամբ հորատվել են 4 հորատանցքեր (1 հորատանցք 25.0 գծամետր, և 3 հորատանցքեր յուրաքանչյուրը 23.0 գծամետր խորությամբ) ՈւԳԲ-1ՎՍ հորատող հաստոցով, սյունակային եղանակով, չոր մեթոդով, հանուկի ընտրմամբ (հորատման տրամագիծը 96-151 մմ), լաբորատոր նմուշների ընտրմամբ: Հետազոտական աշխատանքների կամերալ մշակումը և սույն եզրակացության կազմումն իրականացվել է Ն. Մ. Ալեքսանյանի կողմից:

Շերտ թիվ-1 լիցքային գրունտ չպառկապնդված, խճա-մանրախճային կազմի, հազվադեպ մեծաբեկորներով, կավային և ավազային նյութի խառնուրդով մինչև 30%, շինարարական, տեղ-տեղ կենցաղային թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.3-1.5 մետր:

Շերտ թիվ-2 կարբոնատային կեղև, խճա-մանրախճային կազմի, հազվադեպ մեծաբեկորներով, հրաբխային ապարներից և քոեճից, կավավազային և փոշենման ավազի լցանյութով մինչև 30%, փոշենման ավազի նրբաշերտերով, գրունտը ցեմենտացած է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-2.7 մետր: Չորրորդականի հասակի էյրովիա-պրոլյուվիալ առաջացումներ

Շերտ թիվ-3 կավավազ բաց դարչնագույն, դեղնավուն երանգով, կարբոնատացած, սպիտակահողային, տարահատիկ և փոշենման ավազային նյութի խառնուրդով, փոշենման ավազների նրբաշերտերով և ոսպնյակներով, խճի, մանրախճի հազվադեպ մեծաբեկորների պարունակությամբ, գրունտը տեղ-տեղ ցեմենտացած է, լցանյութը՝

սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 4.0-6.0մետր: **Չորրորդականի հասակի էյուվիա-պրոյուվիալ առաջացումներ**

Շերտ թիվ-4 խճա-մանրախճային գրունտ, հրաբխային ապարներից, խարամա-ավազային լցանյութով մինչև 30%, տեղ-տեղ խարամի բներով և ոսպնյակներով, քարա-բեկորները երբեմն պատված են կարբոնատային թաղանթով, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 2.0-2.5 մետր: **Չորրորդականի հասակի էյուվիա-պրոյուվիալ առաջացումներ**

Շերտ թիվ-5 մեծաբեկորային գրունտ, հրաբխային ապարներից, միջբեկորային կավավազա-ավազային լցանյութով մինչև 10%, տեղ-տեղ խճի և մանրախճի բներով և ոսպնյակներով, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 2.0-3.0 մետր: **Չորրորդականի հասակի էյուվիա-պրոյուվիալ առաջացումներ**

Շերտ թիվ-6 բազալտ, անդեզիտա-բազալտ, մոխրագույն, երբեմն խայտաբղետ երանգներով, ծակոտկեն, տեղ-տեղ խոռոչային, չեչոտ, մասամբ խարամացած, ձեղքավորված, մեծաբեկորային, տեղ-տեղ ջարդոտված խճի և քարաբեկորների աստիճանի, երբեմն հրաբխային ավազների և խարամի բներով, միջին ամրության, արմատական տեղադրմամբ, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը՝ 16.0 մետր: **Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ**

Եզրակացություն

1. Ինժեներա-երկրաբանական հետազոտություններն իրականացվել են համաձայն տեխնիկական առաջադրանքի: Հետազոտական աշխատանքների ընթացքում, առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ տարածքի ինժեներա-երկրաբանական տեղագնում, հորատանցքերի հորատում, գրունտներից նմուշների ընտրում, գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների որոշում լաբորատոր պայմաններում, նախկինում տարբեր գիտա-արտադրական և նախգծա-հետազոտական կազմակերպությունների կողմից, տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետու նյութերի հավաքում, ամփոփում և ընդհանրացում:
2. Հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևան քաղաքի արևմտյան մասում, Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի տարածքում, Լենինգրադյան փողոցի հարավային կողմում, Լենինգրադյան 29/12 հասցեով:
3. Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Եղվարդի հրաբխային սարավանդի սահմաններում, Հրազդան գետի աջափնյա հրաբխային բարձրավանդակի վրա, նրա արևմտյան կողմում, լանջերն ունեն հարավ-արևելյան ուղղություններ: Տեղամասի մերձակայքը մասամբ կառուցապատված է առանձնատներով և բնակելի շենքերով: Անմիջապես հետազոտվող տեղամասը կառուցապատված չէ, մակերեսը հարթ է: Տեղամասի կենտրոնական հատվածում առկա է 5.0-7.0 մետր բարձրությամբ լիցքային գրունտների կուտակում:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1015.0-1018.0 մետրի սահմաններում: Համաձայն ՀՀՇՆ II-7.01-2011 (Շինարարական կլիմայաբանություն) տեղամասը գտնվում է ՀՀ կլիմայական շրջանացման Չափավոր տաք կլիմայական գոտու մեջ: Սեյսմա-տեկտոնական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևանյան միջլեռնային ճկվածքի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմաակտիվ մարզերից մեկը:

4. Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, որոնք պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին, որոնք հորատանցքերով մինչև 25.0 մետր խորությունը չեն բացահայտվել, համաձայն ֆոնդային նյութերի տվյալների դրանք տեղադրված են 50.0 մետրից խորը:


5. Հիմնվելով երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի ուսումնասիրության և գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ամփոփման արդյունքերի վրա, հաշվի առնելով գրունտների երկրաբանական տարիքը, ծագումը և տարատեսակները, երկրաբանական հետազոտության 25.0 մետր հաստվածքում առանձնացվել են գրունտների 6 շերտեր:

6. Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները՝ կարստ, սողանք, փլուզում և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել հիմքերի վրա, բացակայում են, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ կարբոնատային կեղևի (շերտ թիվ-2), կավավազային(շերտ թիվ 3), մասամբ խճա-մանրախճային գրունտների և մեծաբեկորային գրունտների (շերտեր թիվ թիվ-4 և 5), լցանյութը ցուցաբերում են ենթաողողամաշման (субфозия) առանձնահատկություններ, ուստի պետք է մշակել բոլոր տեսակի մակերեսային ջրերի կազմակերպված և կանոնավորված ջրհավաք և ջրհեռ համակարգ, դրանց մուտքը հիմնատակեր բացառելու համար:

7. Համաձայն ՀՀՇՆ 20-04 շրջանը և հետազոտվող տեղամասը մտնում են II (երկրորդ) սեյսմիկ գոտու մեջ:

8. Հետազոտվող տեղամասը կառուցապատման նպատակով իրացման համար ունի բարենպաստ ինժեներա-երկրաբանական և բնակլիմայական պայմաններ:





Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տնողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետևի հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տնողությունը ծրագրվում է 36,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

ՇԻՆ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԸՍՏ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ

[illegible]

1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռուցի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով կազմակերպել արտաքին լուսավորություն:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Ավտոճանապարհների, հրապարակների և մայրերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 90 մարդ, որից

Ինժինեռատեխնիկական անձնակազմ – 10 մարդ

Արհեստագործներ, բանվորներ, վարորդներ և օգնականներ -80 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Աշտարակային կցովի վերամբարձ կոունկ	QTZ 125 (6513.8)	1
2	Ավտոմոբիլային կտունկ	LIEBHERR LTM 1100-4.2	1
3	Էքսկավատոր	CAT 320	2
4	Գլղոն	CAT CS 563	1
6	Բուլդոզեր	CAT D6R	1
7	Շարժական կոմպրեսոր	Comp air C 76	1
8	Ավտոբետոնապոմպ	Merc B. <u>Acrtos</u> 4144 D	1
9	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	IB-91A	2
10	Թրթռիչ խորքային էլեկտրական	IB-102A	4
11	Փոխարկիչ թրթռիչների համար	IB-4	2
12	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		6
13	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	4
14	<u>Ավտոհնարափ</u>		ըստ հաշվարկի
15	Ավտոբետոնախառնիչ	<u>Kamaz</u> 58149 z	ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում: Շինհրապարակից ելքի ժամանակ տեխնիկական միջոցների անվադողերը կլվացվեն ջրի ճնշումային շիթով: Պարզված ջուրը կօգտագործվի ջրցանի համար, իսկ նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է տարեկան մեկ մարդու հաշվարկով 70 կգ $90 \times 70 \times 3 / 1000 = 18.9$ տ և շինարարական աղբն է 280 խմ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

- a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 10 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 80 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1095 օր

$$W_{\text{խ.տ.}} = (10 \times 0.016 + 80 \times 0.025) \times 1095 = 2365 \text{ խմ/շին. ժամ.}:$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000 քմ,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1095

$$U_1 = 1000 \times 0.0015 \times 1080 = 1643 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 4007 խմ/շին. ժամ:

Հասարակական շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով Մ.Մեծարենցի փողոցով անցնող $d=800$ մմ ջրատարից, իսկ կոյուղին նույն փողոցով անցնող $d=1400$ մմ կոյուղատարից :

Շինարարության փուլում ջրցանի համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրվող բիոզուգարաններ, իսկ ջուրը կմատակարարվի տարաներով:

Էլեկտրամատակարարումը 1035 կՎԱ ծախսով կիրականացվի նախատեսվող ենթակայանից:

Նախատեսվող շենքի գազաֆիկացումը 80խմ/ժամ ծախսով Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ունենալ աղմուկի ցածր մակարդակ:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վարչական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևան քաղաքի արևմտյան կողմում, Մալաթիա-Մեֆաստիա վարչական շրջանի տարածքում, նրա հարավային մասում: Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Եղվարդի հրաբխային սարավանդի սահմաններում, Հրազդան գետի աջափնյա հրաբխային բարձրավանդակի վրա, նրա արևմտյան կողմում, լանջերն ունեն հարավ-արևելյան ուղղություններ: Տեղամասի մերձակայքը մասամբ կառուցապատված է առանձնատներով և բնակելի շենքերով: Անմիջապես հետազոտվող տեղամասը կառուցապատված չէ, մակերեսը հարթ է: Տեղամասի կենտրոնական հատվածում առկա է 5.0-7.0 մետր բարձրությամբ լիցքային գրունտների կուտակում, որի հեռացումից և շինարարական փոսորակի քանդումից հետո անհրաժեշտության դեպքում նախատեսվում է հորատել ևս 1 հորատանցք՝ հիմքերի տակի նիշից: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1015.0-1018.0 մետրի սահմաններում:

Երևան, քաղաք տեղակայված է Հրազդան գետի երկու ափերին: Հանդիսանում է պետության մայրաքաղաքն ու խոշորագույն բնակավայրը, վարչաքաղաքական, տնտեսական կենտրոնը: Համաձայն Հայաստանի պաշտոնական տեղեկատվության՝ 2014 թվականի հունվարի մեկի դրությամբ ունի 1.091.700 բնակիչ: Բնակչությունը աշխատում է արտադրական, էներգետիկ և այլ օբյեկտներում: Իրականացվում են մեծ ծավալի քաղաքաշինական ծրագրեր:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Անանուն բազալտներ	սյունաձև	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Մր. Սարգիս եկեղեցու մոտ
Անանուն բազալտներ	սյունաձև	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արմ ճակատամուտքի մոտ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է մոտ 3 կմ հեռավորության վրա:

Մալաթիա-Մեֆաստիա վարչական շրջանի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Գերեզմանոց «Եռաբլուր» Փառքի Պանթեոն	1990 թ.	հվ-ամ մասում, Ծովակալ Իսակովի պ.- Մեֆաստիայի փ. խաչմերուկից հս-ամ
Գերեզման՝ Անդրանիկի (Անդրանիկ Օզանյան)	1999 թ.	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Գերեզման՝ Մոնթե Մելքոնյանի (Ավո)	1993 թ.	
Գերեզման՝ Վազգեն Սարգսյանի	1999 թ.	
Խաչքար Արցախյան պատերազմի զոհերին	1994 թ.	Սեբաստիայի փ.
Հուշահամալիր Երկրորդ աշխարհամարտում տարած հաղթանակի 40 ամյակին	1985 թ.	Սեբաստիայի փ.
Հուշարձան՝ «Հին և նոր Մալաթիա»	1973 թ.	Սեբաստիայի փ.
Հուշարձան Ստեփան Շահումյանի	1970 թ.	Սեբաստիայի փ. 32
Հուշարձան Դանիել Վարուժանի	1974 թ.	Սեբաստիայի փ. 19
Ջրանցք՝ Ումեշինի (Էջմիածնի առու)	մ.թ.ա. 7 դ.	Հրազդանի աջ ափին, Կարմիր բլուրի մոտ
Հուշակոթող՝ Ումեշինի ջրանցքին	1968 թ.	Ծովակալ Բասկովի պ.
Քաղաքի մուտք. Երևանի հարավարևմտյան մուտքը («Շինարար Արծիվ»)	1966 թ.	Էջմիածնի խճ.
Խաչքար	14-15 դդ.	Սեբաստիայի փ., թաղապետարանի մոտ, Սբ. Աստվածածին եկեղեցուց 10 մ հս
Հուշարձան «Վահագն Վիշապաբաղ»	1975 թ.	Ծովակալ Բասկովի պ. և Սեբաստիա փ. խաչմերուկի հատվածում

Ջրային ցանցը տեղամասում քիչ զարգացած է, տարածքի հիմնական ջրային երակ է հանդիսանում Հրազդան գետը, որի ռեժիմն ամբողջությամբ կարգավորված է տարատեսակ հիդրոտեխնիկական կառույցներով, ինչպես նաև մանր ջրահոսքերով և ջրանցքներով: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում առկա են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ կապված ստորգետնյա ջրերը, որոնք պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին: Համաձայն հրատարակված գրականության տվյալների ստորգետնյա ջրերը տեղադրված են 50.0 մետրից խորը:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, որոնք պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին, որոնք հորատանցքերով մինչև 25.0 մետր խորությունը չեն բացահայտվել, համաձայն ֆոնդային

Մոտեցումներն ապահովված են Լենինգրադյան և Մ.Մեծարենց փողոցներից: Կից գտնվում են հասարակական շենքերով ծանրաբեռնված և կառուցապատումից ազատ հողամասեր:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան: Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆազիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

2.2 ՇՐՋԱՆԻ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի Երևան քաղաքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,4g$ և ունի 9 և ավելի բալ սեյսմիկայնություն:

2.2 ԿԼԻՄԱՆ

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30°C , բացարձակ մաքսիմումը հասնում է $+42^{\circ}\text{C}$: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութա- բանական կայան	Օդերևութա- բանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	1113	-2.9	-0.8	5,1	11.8	16.3	20.8	24,5	24.2	19.9	13,1	6.4	0.1	11,5	-21	41

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութա- բանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
														հունվարին	օգոստոսին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների												Տարեկան	Զնածածկույթ		
	Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Առավելագույն տասնօրյակա-յին բարձրությունը,սմ	Տարվա մեջ ձնածածկություվ օրերի քանակը	Չյան մեջ ջրի Առավելա-գույն քանակը,մմ
	Ըստ ամիսների															
28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353				
Երևան	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47	50	53	152

Աղյուսակ 1.4 Քամի

Բնակավայր, օդերևույթաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնճում, (հ Պա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղությունների Միջին արագություն, մ/վ								Անհողությունների	Միջին ամսական	Միջին տարեկան	Ուժեղ քամիներով	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			Հյուսիսայն (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրմ)	Հարավ (Ավ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
Երևան «Արաբկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0,9	2,0	30	20	23	25
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9							
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1					
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5							
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4					
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6							
		հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8					
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0							


2.3 Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:


Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:


Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



2.3 Ջրային ռեսուրսներ

«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես պարբերական մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները 2021 թվականի (վերջին տարեկան տեղեկանք) ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում: Հրազդան գետի գետի վերին ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս): Արգնի ՀԷԿ-ից ներքև, Դարբնիկ գյուղի մոտ և գետաբերանի հատվածներում /Երևանից ներքև/ ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս): Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է՝ (5-րդ դաս): Վատ որակը պայմանավորված է լուծված թթվածնի, ԹԿՊ, ամոնիում իոնի, ֆոսֆատ իոնի, մանգանի, վանադիումի, ընդհանուր ֆոսֆորի բարձր պարունակությամբ:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.4 Ջրային ռեսուրսներ

«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես պարբերական մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները 2021 թվականի (վերջին տարեկան տեղեկանք) ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում: Հրազդան գետի գետի վերին ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս): Արգնի ՀԷԿ-ից ներքև, Դարբնիկ գյուղի մոտ և գետաբերանի հատվածներում /Երևանից ներքև/ ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս): Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է՝ (5-րդ դաս): Վատ որակը պայմանավորված է լուծված թթվածնի, ԹԿՊ, ամոնիում իոնի, ֆոսֆատ իոնի, մանգանի, վանադիումի, ընդհանուր ֆոսֆորի բարձր պարունակությամբ:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.6 Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 27570 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 20500 խմ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

2.7 Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ: Նախատեսվող գործունեության տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Երեւանի ֆլորիստիկ շրջանին, որին սովորաբար յուրահատուկ են կիսաանապատային եւ անապատային բուսածածկույթը, տարածքի հարեւանությամբ հանդիպող սակավ բուսատեսակները հիմնականում քսերոֆիտներ (չորասերներ) են: Ընդհանուր առմամբ, Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, քսերոֆիտ, օշինդրային կիսաանապատների բուսածածկ ոչ բնակելի, ոչ արտադրական, բնական բուսածածկով տարածքներում կարող է աչքի ընկնել տեսակային հարուստ բազմազանությամբ: Որպես կանոն, այս տեսակները տարածված են ոչ աղակալված, մակերեսային քարքարոտ գորշ հողերի վրա եւ ներկայացված են օշինդրաէֆեմերային-կիսաանապատային եւ հալոֆիլ-անապատային տիպերով: Օշինդրային կիսաանապատների հիմնական բաղադրիչը օշինդր բուրավետն է (*Artemisia fragrans*), որը մինչեւ 50 սմ բարձրության, փայտացած առանցքով կիսաթփիկ է: Այն զարնանը եւ ամռանը պահպանում է իր մոխրագույն տեսքը, աշնանը ծածկվում է մանր դեղին ծաղիկներով: Գարնանը այդ թփերի միջ եւ ընկած տարածությունը զբաղեցնում են էֆեմերները՝ *Ceratocephalus falcatus*, *Ziziphora tenuifolia*, *Ziziphora persica*, *Alyssum desertorum*, *Poa bulbosa*, *Bromus tectorum*, *Lepidium vesicarium* տեսակներով: Հունիսի կեսերին, տեղումների քանակին նվազեցման եւ օդի ջերմաստիճանի բարձրացման հետ այս տեսակները չորանում են: Սակայն աշնանը տեղումների ավելացման հետ մեկտեղ օշինդրային անապատները վերակենդանանում են, ծաղկում են՝ օշինդրը (*Artemisia*), *Kochia prostata*, *Noaea mucronata* եւ այլ բուսատեսակներ: Ուշ աշնանը եւ ձմռանը հողը ծածկվում է աճող էֆեմերների կանաչ գորգով: Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ *Acorus calamus* L. (Խնկեղեգճահճային), *Lepidium lyratum* L. (Նվարդակքնարածեւ), *Salsola tamamschjanae* Iljin (Օշան Թամամշյանի), *Astragalus paradoxus* Bunge (Գազտար օրինակ), *Glycyrrhiza echinata* L. (Մատուտակ խոզանավոր), *Rhizocephalus orientalis* Boiss. (Արմատագլխիկ արեւելյան): Նշված բուսատեսակները հանդիպում են Երեւանի ֆլորիստիկ շրջանում, սակայն ծրագրի համար նախատեսված տարածքներում տարածման արեւալներ չունեն: Նախնական ուսումնասիրությունների եւ գրականական տվյալների նույնականացման

արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել:

Կենդանական աշխարհ: Նախատեսվող գործունեության հարակից տարածքներին էլ ընդհանուր լանդշաֆտային գոտուն բնորոշ կաթնասունների տեսակային կազմից ամենուրեք հանդիպում են՝ *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), մի քանի տեսակ չղջիկներ՝ *Nyctalus noctula* (շեկիրիկնաչղջիկը), *Vespertilio ognevi* (Օգնեւիմաշկեղը), միջատակերներ (Hemiechinus auritus, *Mustela nivalis*): Անողնաշար կենդանատեսակներից տարածաշրջանում հանդիպում են՝ *Phytodrymadusa armeniaca* (ծղրիղներ), *Nocarodes armenus* (մորեխներ), *Amphicoma eichleri*, *Cantharis araxicola* (բզեզներ), *Zodarion petrobium* (սարդեր): Կարիճներից հանդիպում է միայն *Buttus caucasicus*-ը: Նախատեսվող գործունեության իրականացման տարածից դուրս բնական, տնտեսական գործունեության մեջին տեսիվ ներգրավվածություն չունեցող տարածքներում Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներից կաթնասուններից կարող են հանդիպել *Rhinolophus Mehelyi* (Մեհելիի պայտաքիթ), (*Barbastella leucomelas*), Ասիական լայնականջ չղջիկ, (*Miniopterus schreibersi*) Սովորական երկարաթև չղջիկ: Թռչուններից՝ (*Circaetus galicus galicus*) Եվրոպական օձակերը, (*Merops superciliosus persicus*) Պարսկական կանաչ մեղվակերը, (*Sylvia nisoria nisoria*) Եվրոպական ճուռական մանշահրիկը, (*Luscinia svecica occidentalis*), Իրանական կապտափողը, (*Remiz pendulinus menzbieri*) Իրանական սովորական ճոճհավը եւ այլն, սողուններից՝ (*Eumeces schneideri*) Երկարաթև սցնիկը, (*Mabuya aurata*) Ոսկեգույն մաքույա, (*Elaphe hohonaekeri*) Անդրկովկասյան սահնօձ:

2.8 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 31.5 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 280 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

«Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չադտոտված հող» ծածկագիրը՝ 31401100 08 99 5) թափոնը՝ 20500 իմ ծավալով կտեղադրվի Երևանի քաղաքապետարանի կողմից շինարարության թույլտվությամբ հաստատված վայրում:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս թաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NO_x):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը և անվադողերի լվացումից առաջացող հոսքերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

3.3.3 ՀՈՂԱՑԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

- գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
 - բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
 - Նախատեսվող հասարակական համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների
 - իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

4. Մշտադիտարկումների իրականացման պլան

Հասարակական համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 2160000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	600000	600000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	36x35000	1260000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	12x25000	300000
Ամբողջ շինարարության համար		2160000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: (d) Շինհրապարակից ելքի ժամանակ տեխնիկական միջոցների ավադողերը պարտադիր լվանալ: (e) Համաձայն մթնոլորտային օդի պահանջության մասին ՀՀ օրենքի, շինարարության ժամանակ փոշեգոյացման տարածումը կանխելու համար նախատեսվող կառույցը ծածկել, այդ նպատակով նախատեսված հատուկ ցանցով:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված

		Ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:

		▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:
Արտակարգ իրավիճակների կառավարում	Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում	- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ; - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 01/18-04/1-7-4678-430

«25» «05» 2022թ.

Օբյեկտ	Հասարակական համալիրի կառուցման (բարձր ռիսկայնության օբյեկտ, IV կարգերի)
(օբյեկտի անվանում, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն, հակիրճ բնորոշում, հզորություն, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան))	
Մեկ փուլով՝ «Աշխարհաբանի նախագիծ» կամ երկու փուլով՝ «Նախագիծ» և «Աշխարհաբանի փաստաթղթեր» նախագծային փաստաթղթերի մշակման համար	
(նախագծային փուլերը և այլն)	
Գտնվելու վայրը	Մայրաքաղաքի վարչական շրջան, Լենինգրադյան փողոց h.29/12
(վարչական շրջանի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)	
Կառուցապատող	«ԼՈՒՅՍԵՐ» ՓԲԸ
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆինանսական անձի անունը, ազգանունը, քննության վայրը, հետախուսահամարը, էլեկտրոնային հասցեն)	
Առաջադրանքի տրամադրման հիմքը	հ.19112021-01-0307 վկայականը, էքսիզային նախագիծը:
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)	
ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (աստղանիշով) (*) Նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)	
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, կադաստրային ծածկագիրը՝ 01-007-0282-0300:	
(հողամասի դիրքը բաղադրաչինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)	
1. Հողամասը գտնվում է	0.21978 հա:
(հողամասի դիրքը բաղադրաչինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)	
2. (*) Հողամասի չափերը	0.21978 հա:
(հողամասի սահմանները՝ կորդինատային նշահարմար, մակերեսը (հա))	
3. Հողամասի առկա վիճակը	Կառուցապատմից ազատ հողամաս:
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդակների) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)	
4. (*) Տրանսպորտային պայմանները	Լենինգրադյան և Մ. Մեծարենցի փողոցներ:
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)	
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Կից գործող ինժեներական գծեր և հաղորդակցողներ:
(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգերը)	
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)	
6. (*) Կից հողամասեր	Բազմաբնակարան բնակելի շենքեր և կառուցապատումից ազատ հողամասեր:
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)	
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)	-----
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)	
8. (*) Հատակագծային սահմանափակումներ	-----
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)	
ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ (աստղանիշով) (*) Նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)	
9. Ճարտարապետահատակագծային պահանջներ	Մշակել երկու ծավալներից բաղկացած հասարակական համալիրի նախագիծ h.19112021-01-0307 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում:
(եղևիվ ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա բաղադրաչինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորող) բաղադրաչինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)	
9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)	-----
9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)	Հարակից հողամասերից և շենք-շինություններից կառույցի հեռավորությունը նախատեսվում է գործող նորմատիվային պահանջների համաձայն:
9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)	Համալիրը նախատեսվում է 3 ստորգետնյա հարկերով: Ընդլայնված ծավալի բարձրությունը նախատեսվում է նախագծային զրոյական նիշից ոչ ավել քան 17.5մ: Մեծարենց փողոցին հարող ճակատից նախատեսվում է բարձր շենքադրված ծավալի բարձրությունը նախատեսվում է նախագծային զրոյական նիշից ոչ ավել քան 46.0մ: Հնարավոր են մասնակի ավելի բարձր ծավալներ՝ տանիքը սպասարկող ասֆիճանականակների, տեխնիկական սենքերի և վերելակների հորանների համար:
9.4. կառուցապատման խտության գործակիցը	-----
(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)	
9.5. կառուցապատման տոկոսը	Համաձայն էքսիզային նախագծի:
(կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)	
9.6. կանաչապատման տոկոսը	Համաձայն էքսիզային նախագծի:
(կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)	
9.7. այլ պահանջներ	- ՀՀ կառավարության 19.03.2015թ. 596-Ն որոշման 1-ին հավելվածի 87-րդ կետի և սույն Նախագծման թույլտվության 23-րդ կետով ամրագրված դրույթների համաձայն՝ էքսիզային նախագծի միջանկյալ համաձայնեցման փուլում անհրաժեշտ է ապահովել կառույցի եռաչափ տեսքի տեղակայումը տարածական միջավայրում: - Սույն թույլտվության 20-րդ կետով ամրագրված պահանջները ապահովելու նպատակով՝ շինարարական հրապարակի կազմակերպման նախագծում, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման պարագայում նշել դրանց մակերեսը: - Նախագծով ապահովել հարակից տարածքների շահագործման նորմատիվային պահանջները: - Կառույցը հարևան հողամասերի սահմանագծով տեղակայվելու պարագայում ստանալ համապատասխան հողամասի սեփականատիրոջ գրավոր համաձայնությունը: - Կառույցը նախատեսվում է կենտրոնացված օդափոխությամբ: - Հարակից գոտային լուծումները մշակել համաձայն պարամետրիկ առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները: - Կառույցում նախատեսվում է անհրաժեշտ առանձնացված ինժեներական հորաններ, բացառելով հեղափոխում արտաքին ճակատներով օդափոխության անցկացումը: - Նախագծով լուծել ավտոտրանսպորտի անվտանգ ելուժուրի և բացօթյա ավտոկայանման խնդիրները: - Տանիքները նախատեսվում են կազմակերպված ջրահեռացմամբ՝ հնարավոր է նախատեսել շահագործվող:

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը	-----
11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	Նախատեսվել ստորգետնյա ավտոկայանարդիներ:
12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Նախագծի ինժեներական մասը մշակել իրավասու կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմաններին համաձայն:
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում	Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	Առկա է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատա կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	----- (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	-----
12.6. աղբահանություն	-----
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	Կազմակերպել ջրահեռացում: (ոեխիճի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	Հարակից տարածքը բարեկարգել: (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փորձ ձևեր, ցանկապատում, գոլազր, և այլն)
15. Շինարարական նյութեր	• Երկաթբետոն, սրբաքար և կոպրաքար քար, փայտ, մեմբրա, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր: (շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	Նախատեսվել արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ: (արտակարգ իրավիճակներում մարդկանց, օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներ	Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները, ապահովել հրշեջ հիշրանտների առկայությունը: (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	Նախատեսվել հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժելու համար անհրաժեշտ պայմաններ՝ ՀՀԸՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմին համապատասխան:
19. Շրջակա միջավայրի պահպանում	• Նախատեսվել շրջակա միջավայրը վնասված վիճակից բացառելու համապատասխան միջոցառումներ: • Ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև աղմուկին, թրթռումներին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և փոխնածին ծագման գործոններին սանիտարական կանոններով և նորմերով, շինարարական նորմերով ներկայացվող նորմատիվ պահանջները: (շրջակա միջավայրը վնասված վիճակից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկարի ունենալով Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ. 405-Ն որոշմամբ սահմանված տրցուցիչ պայմանները: 111. Նոր կառուցվող շենքերի, շինությունների համար շինարարության թույլտվությունը տրվում է 2 տարի ժամկետով, եթե տվյալ օբյեկտի շինարարության համար քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմին ՍՆԻՊ 1.04.03-85* (Չեռնուկովսկի շենքերի և կառուցվածքների շինարարության տեղության նորմերը) գերատեսչական ակտով սահմանված նորմերով այլ ժամկետներ նախատեսված չեն: 112. Գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման (ներառյալ՝ ըստման), վերակառուցման, ուժեղացման և բարելավման աշխատանքների համար թույլտվությունը տրվում է նախագծային փաստաթղթերով տվյալ օբյեկտի շինարարության (բաղման կամ ապահովման) տեղության նորմերով հաշվարկված ժամկետով: (առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	Երեք տարի: (նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը) Լ Բ Ա Ց Ո Ւ Ց Ի Զ Պ Ա Յ Մ Ա Ն Ե Լ Ը
22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի համաձայն՝ պետական համալիր փորձաքննություն, 1500ք.մ. և ավելի կառուցապատման դեպքում նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ: (ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)
23. Միջանկյալ համաձայնեցում	• Էքսիզային նախագծի միջանկյալ համաձայնեցում Երևանի քաղաքապետարանի հետ: • ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ: (իրավասու մարմնի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էքսիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ):
24. Հասարակական քննարկումներ	----- (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)
25. Համաձայնեցումներ	• Երևանի քաղաքապետի հետ: • Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ: (նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցում՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)
26. Փոստային բաժանորդային պահպանումների տեղադրում	-----
27. Այլ պայմաններ	Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու մասին» հ. 128-Ն հրամանով հաստատված դրույթներին:



Երևանի քաղաքապետ՝
ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ
Կալարող՝ Գ. Կնյազյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 19 նոյեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԼՈՒՅՍԵՐ» ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Մալաթիա Լենինգրադյան փողոց 29/12

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագրեր կնքված 15/10/2021 թ-ին Երևան նոտարական տարածքում սմ-11480 և 11479

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-007-0282-0300

Մակերեսի չափը (հա)՝ 0.21978

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 19112021-01-0307, գաղտնաբառ՝ VYEER4UUM7FX

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԽՈՍՐՈՎ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ


Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 19112021-01-0307, գաղտնաբառ՝ VYEER4UUM7FX

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով



Կադաստրի
կոմիտե



- 5-12 ՀԱՐԿԵՐԻ ՈՒՐԿԱԳԻԾ
- 2-4 ՀԱՐԿԵՐԻ ՈՒՐԿԱԳԻԾ
- ՀՐԵԶ ՄԵՔԵՆԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀ
- ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆ
- ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՐԵՎԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ
- ԸՆԹԱՑՈՂ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
- ՆԱԽԱԳԾՎՈՂ ՇԵՆՔԻ 12 ՀԱՐԿԱՆԻ ՄԱՍ
- ՆԱԽԱԳԾՎՈՂ ՇԵՆՔԻ 4 ՀԱՐԿԱՆԻ ՄԱՍ
- ԿԱՆԱԶԱՊԱՏ ՏԱՐԱԾՔ
- ԾԱՌ



«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

ԵՐԵՎԱՆԻ ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՍԱՆՆԱՃՅՈՒՂ

ЗАО «Газпром Армения»

ЕРЕВАНСКИЙ ФИЛИАЛ ПО ГАЗИФИКАЦИИ И ГАЗОСНАБЖЕНИЮ

0025, ԲՅ, ք. Երևան, Չարենցի 141/3: 0025, РА, г. Ереван ул. Чаренца 141/3.

Հեռ. /Тел: (+374 10) 55 45 00, Ֆաքս /Факс: (+374 10) 55 92 74: E-mail: yerevan@gazpromarmenia.am

17. 04. 2022

№ 22183/1396

«Լույսեր» ՓԲԸ տնօրեն
պարոն Գ. Չիչոյանին

Հարգելի պարոն Չիչոյան

Ի պատասխան Ձեր 18.04.2022թ. դիմումի՝ առք ու վաճառքի պայմանագրով ձեռք բերված Լենինգրադյան փողոցի թիվ 29/12 տարածքը և հիմք ընդունելով Երևանի ԳԳՄ կողմից 2019թ տրամադրած գազաֆիկացման տեխնիկական պայմանները, գազաֆիկացման նախագիծը համաձայնեցված Երևանի ԳԳՄ հետ, իրականացված գազատարի շին. մոնտաժային աշխատանքները, Երևանի ԳԳՄ-ն չի առարկում շենք շինությունների կառուցապատման աշխատանքներն ավարտելուց հետո համաձայն ԳՄՕԿ-ի Ձեզ ճանաչել գազասպառող բաժանորդ:


ՏՆՕՐԵՆ

Գ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Գ. Ավագյան
հեռ. 57-03-07 22-55

«ԳԱԶՇԻՆ ՄՁ» ՍՊԸ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ



Նախագծի մասը՝

Գ Ա Ջ Ա Ֆ Ի Կ Ա Ց Ո Ւ Մ

Պատվիրատու՝ Սեփականատեր Արևիկ Գրիգորյան

Հասցե՝ Լենինգրադյան փողոց թիվ 29/12 և 29/13
հողատարածք

ԵՐԵՎԱՆ



«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
ԵՐԵՎԱՆԻ ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՍՏԱՏՎԱՐԱՐՄԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ЗАО «Газпром Армения»
ЕРЕВАНСКИЙ ФИЛИАЛ ПО ГАЗИФИКАЦИИ И ГАЗОСНАБЖЕНИЮ

0025, ԲՅ. ք. Երևան, Չարենցի 141/3: 0025, РА, г. Ереван ул. Чаренца 141/3.
Հեռ./Тел: (+374 10) 55 45 00. Ֆաքս/Факс: (+374 10) 55 92 74: E-mail: yerevan@gazpromarmenia.am

28 06 2019

№ 22-13/2026

Սեփականատեր
Արևիկ Գրիգորյանին

Ի պատասխան Ձեր 25.06.2019թ. դիմումի հայտնում եմ, որ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Լենինգրադյան փողոցի թիվ 29/12 և 29/13 հասցեներում հանարական նշանակության շինության գազամատակարարումը՝ բնական գազի $G=80մ^3$ /ժամ ծախսով հնարավոր է իրականացնել տարածքի միջին ճնշման $p=159մմ$ տրամագծի գազատարից՝ նախագծային լուծմամբ:

Համաձայն գործող կարգի ճշգրտված գազիֆիկացման տեխնիկական պայմանները կտրամադրվի օբյեկտի կառուցումը ավարտելուց հետո՝ տեղադրվելիք գազասարքավորումների ջերմոտեխնիկական ցուցանիշները նոր դիմումով Երևանի ԳԳՍ ներկայացնելուց, տեխնիկական պայմանների հատկացման համար ԳՍՕԿ-ով սահմանված գումարը վճարելուց հետո:

Կից ներկայացվում է սնող արտաքին գազատարի տեխնիկական պայմանները՝ 1 էջ:

(ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ

Ս.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

«ԳԱԶՇԻՆ ՄԶ»

ՍՊԸ



GAZ SHIN» MZ

«ГАЗ ШИН» МЦ

ՆԱԽԱԳԾԱ - ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ # ՔՊԼ 17028

ՕԲՅԵԿՏԻ ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՍՑԵ՝ ՀՀ, Բ. ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՐԱՍՏԻԱ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ ՓՈՂՈՑ
ԹԻՎ 29/12 ԵՎ 29/13

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԱՐԵՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕԲՅԵԿՏ ԳՇ -110/19

ԳՈՒՅՔ-110

ԱՏԲ ՊԵՏ՝

ԱՏՈՒԳԵՑ՝

ՆԱԽԱԳԾԵՑ՝




Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Յ. ԱՍԱՏՐՅԱՆ

Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

«11» 2019
ԵՐԵՎԱՆ


ՀԱՏԱԿԱԳԻՃ Մ-1:1000



Դրամի ԳՊԾ և
Գրամայի Ե ԲԾ237/10
26/12-19թ.

[Signature]

ՏՆՕՐԵՆ	Հ. Ասատրյան	Սեփականատեր Արևիկ Գրիգորյան Լենինգրադյան փողոց թիվ 29/12, 29/13	ՊԱՏՎԵՐ N	
Նախագծող	Վ. Խաչատրյան		ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
		Գազատակարարում	ՓՈՒԼ	
		Գլխավոր հատակագիծ Տարածական գծապատկեր	«ԳԱԶՇԻՆ ՄՁ» ՍՊԸ	



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԵՐԵՎԱՆԻ ԳԳՄ ՏՆՕՐԵՆԻ ԺՊ

Ս.ԹԱՐԵԿՈՍՅԱՆ

« 06 » 2019թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ք. Երևան Մայրաքիա-Սեբաստիա վարչական շրջանի, Լենինգրադյան փողոցի թիվ 29/12 և 29/13 հասցեներում սեփականատեր Արևիկ Գրիգորյանի կողմից կառուցվող հասարակական նշանակության շինության զազամատակարարումը.

1. Գազի 80 մձժամ ծախսով հնարավոր է իրականացնել՝ տարածքի միջին ճնշման $\eta=159$ մմ տրամագծի զազատարից՝ նախագծային լուծմամբ.

2. Միացվող զազատարում գազի ճնշումը՝ $P = (1.0 - 1.5)$ կգ/սմ²

3. Միացման կետը՝ «Ա» կետում

(նշել՝ միացման տեղի հասցեն, տեղակայումը և պիկետը)


4. Լրացուցիչ պահանջներ՝ զՍՕԿ-ի 12.3 կետի միացման պայմանագիր կնքելու համար կառուցապատողը մատակարարի կողմից սահմանված ձևով դիմումի հետ մեկտեղ ստացված գազի ֆիկացման տեխնիկական պայմանները ներկայացնում է մատակարարին: Կառուցվող զազասպարտման համակարգը զազամատակարարման զանցին միացվում է զՍՕԿ-ի 11-րդ գլխով սահմանված կարգով:

(Դիդրավիկական վերահաշվարկի կատարման ամփրաժեշտությունը)

5. ԳՃԿ-ի տեղադրումը՝ նախագծային լուծմամբ

(Գլխամասային հաշվիչ հանգույցի տեղադրում, ԷՊԿ ՉԿԿ նախատեսում և այլն)

6. Օբյեկտի զազամատակարարման վերականգնման (կամ գազի ֆիկացման) զծապատկերը



7. Տեխնիկական պայմանները կազմված են «28» 06 2019 թ.

և գործում են մինչև «28» 06 2020 թ.

Երևանի ԳԳՄ Տնօրենի առաջին տեղակալ,
գլխավոր ճարտարագետ

(Ստորագրություն)

Ս.ԹԱՐԵԿՈՍՅԱՆ

ՀՏՔ պետ՝

(Ստորագրություն)

Գ.ԱՎԱԳՅԱՆ

Մեփականատեր

«ԼՈՒՅՍԵՐ» ՓԲԸ

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ք. Երևան, Մալաթիա Անբասիտա, Լենինգրադյան փողոց, 29/12


Մարզ, համայնք, հասցե

Հողահատկացման հիմքը

Հաստատում եմ _____, 2021թ.


Համայնքի ղեկավար Կ.Տ.



անուն, ազգանուն, հայրանուն




Մակերես հա	0.21978	Հողամասի				Մասշտաբ 1:500			
Ծածկագիր	01-007-0282-0108 և 0107	Երջարդարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)	Որակավորում ունեցող անձ		Արման Ավետիսյան	
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի		X	Y		Որակավորման վկայականի համարը		0161	
Գործառնական նշանակություն	Հասարակական կառուցապատման					Ստորագրություն			
Լրացուցիչ նշումներ.		1	8454660.2215	4450654.4218	34.73	Իրավաբանական անձի անվանումը		«Արման Ավետիսյան» ԱԶ	
		2	8454672.7898	4450686.8006	26.00	Հվհհ		282.116.2908	
		3	8454698.7863	4450686.3768	16.35	Ստորագրություն			
		4	8454715.1348	4450686.1103	14.00	ամիս		01.11.2021	
		5	8454716.4748	4450672.1746	15.00	ամսաթիվ		16.11.2021	
		6	8454731.4719	4450671.8777	1.07	չափագրության			
		7	8454731.5878	4450670.8139	2.03	հատակագծի			
		8	8454731.6944	4450668.7852	2.05	կազմման			
		9	8454731.7314	4450666.7336	2.07				
		10	8454731.6966	4450664.6625	2.09				
		11	8454731.5881	4450662.5756	2.11				
		12	8454731.4042	4450660.4765	2.12				
		13	8454731.1435	4450658.3691					

Հողամաս			
Երջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
13	8454731.1435	4450658.3691	2.14
14	8454730.8047	4450656.2577	2.15
15	8454730.3870	4450654.1464	2.16
16	8454729.8897	4450652.0395	2.18
17	8454729.3126	4450649.9416	2.19
18	8454728.6557	4450647.8570	3.34
19	8454727.5060	4450644.7235	67.98
1	8454660.2215	4450654.4218	



Մասշտաբ 1:500		
Որակավորում ունեցող անձ		Արման Ավետիսյան
Որակավորման վկայականի համարը		0161
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		«Արման Ավետիսյան» ԱԶ
ՀՎՀՀ		282.116.2908
Ստորագրություն		
ամիս ամսաթիվ	չափագրության	01.11.2021
	հատակագծի կազմման	16.11.2021

Կ.Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2021-10-15

«ԼՈՒՅՍԵՐ»

Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)

Գրանցման համար 271.120.1071408

Հիմնադրման տարի 2019

Գրանցման ամսաթիվ 2019-04-29

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 51588300

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 01291675

Սոցիալական վճարների պարտավորությունների
անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի
ծածկագիր) 49121408

Էլ. փոստ -

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ Փ. / ԲՆԱԿԱՐԱՆ / 31 / 12
ԱԶԱՓՆՅԱԿ 0031 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս -

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն Տնօրեն

Անուն Ազգանուն ԳՐԻԳՈՐ ԶԻԶՈՅԱՆ ԵՐՎԱՆԴԻ

Անձնագրային տվյալներ 000802546 2013-01-16 012

Հասցե 16 ԹԱՂ. / Շ / 33 / 61 ԱԶԱՓՆՅԱԿ 0088 ԱԶԱՓՆՅԱԿ
ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2021-10-15
«ԼՈՒՅՍԵՐ»
Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) գրառված չեն

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ 582310000

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2019-05-21	Կանոնադրական կապիտալի փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)
2021-10-15	Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)

Քաղվածքը տրամադրող՝  Փառանձեմ Մարգարյան
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ 15-10-2021



« 29 » ապրիլ 2022թ.
N Հարգելի պարոն Մեղոյան, 18/10600

Ի պատասխան Ձեր 20.04.2022թ. N50/5793-22 գրության՝ հայտնում եմ, որ Մալաթիա-Սերաստիա վարչական շրջան, Լենինգրադյան փողոց 29/12 հասցեի ջրամատակարարումը՝ հնարավոր է իրականացնել Մ.Մեծարենցի փողոցով անցնող d=800մմ ջրատարից, իսկ կոյուղու միացումը նույն փողոցով անցնող d=1400մմ կոյուղատարին:


Տեղեկացնում ենք Ձեզ, որ նշված հասցեի ներքին հրդեհաշիջման համար, անհրաժեշտ է ապահովել հակահրդեհային պաշարապահ ծավալ, քանի որ «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ն ապահովում է միայն խմելու-տնտեսական պահանջներին համապատասխան ջրաքանակ:

Հայտնում եմ, որ վերոնշյալ տարածքով «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող կոմունիկացիաներ չեն անցնում:


Վերոնշյալ աշխատանքները պետք է իրականացվեն «Վեոլիա Զուր» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի և համաձայնեցված նախագծի համաձայն:

Հարգանքով՝  Գլխավոր տնօրեն
Ա. Շախինյան

Պատասխանատու
ԱՏԲ պետ՝ Ա. Մարտիրոսյան
Հեռ. 011300186(221)



ԻՅՏ 10600
29.04.22





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA

ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

ՀՀ ք. Երևան, Ա.Արմենակյան փող. 127

NSՊ-ՃՀԱ-0.4/0233

<<22>> 04 2022թ.

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՃՀԱ տրամադրելու համար

Տրվում է՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետ՝

Ա. Սեդոյանին (20.04.2022թ., 50/5810-2022)

Սպառիչի գործունեությունը և հասցեն՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Լենինգրադյան փողոց հ. 29/12

Պահանջվող հզորությունը՝ 1035 կՎԱ

Սնող ցանցի լարումը՝ 0.4 կՎ

1. Բնակելի կառուցապատման համար անհրաժեշտ էլեկտրամատակարարումը հնարավոր կլինի իրականացնել՝ կառուցվելիք ենթակայանի 0.4 կՎ վահանից:
Նոր ենթակայանի էլ.սնումը կարելի է իրականացնել՝ ԲԵ0238-ի 6կՎ ըՍ-ից:
2. Անվտանգության գոտիները խախտված չեն:
3. Էլեկտրամատակարարման իրականացման համար, անհրաժեշտ է դիմել «ՀԵՏ» ՓԲԸ ցանկացած սպասարկման կենտրոն (մասնավորապես՝ ք. Երևան, Արմենակյան 127)՝ ներկայացնելով՝ ՀԾԿՀ 25.12.2019թ., N*523-Ն որոշման 26 գլխի, 159 կետի պահանջներով նախատեսված փաստաթղթերը՝ էլ. ցանցին միացման պատվեր ձևակերպելու համար:
4. Բնակելի կառուցապատման համար նախատեսվող էլեկտրամատակարարման նպատակով անհրաժեշտ է, որպեսզի կառուցապատողի կողմից տրամադրվի՝ $8 \times 12 = 96 \text{մ}^2$ հողատարածք՝ նոր ենթակայանի կառուցման համար:

Տեխնիկական տնօրեն

Դ. Գրիգորյան